պլաստիկ վարժանքներով: Երեխաները սովորել են պարային նոր շարժումներ: 3 երեխաների խումբ հաճախելը սկսել են հունիս ամսվանից:
Խմբի մասնակիցները սովորել են տարբեր ժանրերի պարային շարքումներ և բեմադրություններ: Լատինամերիկյան պարերից սովորել են ջայֆ, սաբա/վիսկ, հիմնական քայլեր: Տարբեր ազգային ժողովրդական պարերից սովորել են վրացական պարեր, ռուսական պարեր: Սովորել են հայկական նազանք պարը, դասական պարերից սովորել են շղթայաձև պտույտներ:
Հաշվետու ժամանակահատվածում պարի խմբակի երեխաները գեղարվեստական կատարումներով հանդես են եկել կենտրոնի 14-րդ տարեդարձի միջոցառմանը և Բաց դռների արշավին:

**Խոհարության խումբ:** Խումբը մեկրակվել է հունիս ամսին: Խումբ հաճախել են **9** երեխա, որից **4** աղջիկ **5** տղա: Երեխաները տեղեկացվել են հին հայկական ճաշատեսակների, ուտեստների և նրանց առանձնահատկությունների մասին: Երեխաները պատրաստել են բանջարեղեբային աղցաններ աղցաններ, մրգային պաղպաղակ, կոմպոտներ և թթուների տեսականի:

**Անգլերենի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում իրականացվել է Անգելրենի խմբակը՝ <<Կայուն հիմնաքարեր>> սոցիալ-կրթական ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում: Անգլերենի դասընթացները իրականացվում են Օքսֆորդի համալսարանի ուսանողի կողմից՝ կամավոր կերպով և առցանց տարբերակով: Խմբակը իրականացվել է շաբաթական 1 անգամ, 45 րոպե տևողությամբ:
1-ին խմբին մասնակցել է **7** երեխա, որից 1 տղա, 6 աղջիկ: Այս խմբի հետ աշխատանքը իրականացվել է հուլիս ամսին:Եչեխաները սովորել են առօրյա եղանակի և սննդի տեսակների վերաբերյալ բառեր:
Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է ևս մեկ խումբ, որին ներառված են եղել **7** երեխա՝ 3 աղջիկ, 4 տղա: Այս խումբը մեկնարկվել է սեպտեմբեր ամսին: Երեխանեը սովորել են կենդանիների անունները:

**<u>Ամենօրյա տաք սնունդ կենտրոնում:</u>** Հաշվետու ժամանակահատվածում օրեկան կենտրոն է հաճախել **25-35** երեխա և մասնակցել է կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին: Կենտրոն հաճախող յուրաքանչյուր երեխա օգտվել է ամենօրյա տաք սննդից:
Կենտրոնում ճաշը պատրաստվել է կենտրոնի խոհարարի կողմից՝ ըստ նախորոք մշակված ճաշացանկի:

**Յուրաքանչյուր ամիս ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ և նրանց ընտանիքներ՝ նվազագույնը տվյալ լուռում նշված շահառուների թվով:**

Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառ <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել 101 երեխայի հետ (որից՝ 43 աղջիկ, 48 տղա): Յուրաքանչյուր հաշվետու ամսվա ընթացքում շահառուների թիվը հետևյալն է.

- Հուլիս -**80 երեխա**
- Օգոստոս-**84 երեխա**
- Սեպտեմբեր-**95 երեխա**

101 երեխաների քանակական տվյալներ՝ ըստ տարիքային և սեռային բաժանման.

- 0-5 տ.-**2 երեխա**, որից 1 տղա, 1 աղջիկ
- 6-9 տ.- **28 երեխա**, որից 17 տղա, 11 աղջիկ
- 10-12 տ.- **38 երեխա**, որից 18տղա, 20աղջիկ
- 13-18տ.- **33 երեխա**, որից 16տղա, 17աղջիկ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկանին խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **67** ընտանիքի հետ:
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտված շահառուների քանակական տվյալները հետևյալն է.

- **Սոցիալական ծառայություն - 101** երեխա (որից 43 աղջիկ, 48 տղա), 72 ծնող, **4** ընտանիքի անդամ, **6** տատիկ, **1** քույր
- **Սոցիալ-հոգեբանական համալիր ծառայություն- 15 երեխա** (որից 9 տղա, 6 աղջիկ), **10 ծնող** (որից 10 մայր), **2 ընտանիքի անդամ** (որից 2 տատիկ)
- **Հոգեբանական ծառայություն– 97 երեխա** (որից 49 աղջիկ, 48 տղա), **17 ծնող** (մայր); **1 ընտանիքի անդամ** (տատիկ)
- **Լոգոպեդի ծառայություն -17 երեխա**
- **Տաք սնունդ- 101 երեխա,** որից՝ 43 աղջիկ, 48 տղա
- **Խմբավարի ծառայություն/- 22 երեխա,** որից 14 աղջիկ, 8 տղա
- Պար- **14** երեխա, որից **13 աղջիկ, 1 տղա**
- Խոհարարություն- **11** երեխա, որից **7տղա, 4 աղջիկ**
- Անգլերեն **7** երեխա, որից **6 աղջիկ, 1 տղա**

**Համայնքային մշակութային կյանքին ԿԴԻՀ երեխաների ընգրկվածության ապահովում: Շահառուների առնվազն 90% ծնողների ընգրկվածությամբ՝ կարիքահեն դասընթացներ /ծնողավարման հմտություններ, ֆինանսական միջոցների տնօրինում և այլն/:**

**Ծնողավարման հմտությունների զարգացմանը ուղղված դասընթացներ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից խմբային դասընթաց/հանդիպումներ են իրականցվել շահառու ծնողերի հետ «Երեխաների տարիքային զարգացման առանձնահատկություններ» և «Ծնողավարման հմտություններ» թեմաներով:Հանդիպումները իրականացվել են 2 խմբով:
Առաջին խմբում ներառված են եղել թվով **23** ծնող:
Երկրորդ խմբում ներառված են եղել թվով **32** ծնող
Դաընթացներին մասնակցել է ընդհանուր թվով **55 ծնող**:
Ծնողների կողմից լրացվել են հանդիպումների ընթացքում լրացվել են նախնական և վերջնական հարցաթերթեր, որի միջոցով սոցիալական աշխատողները չափել են նրանց ձեռք բերած գիտելիքները:
Հանդիպումների ընթացքում իրականացվել են հետևյալ թեմանորվ դասընթացները՝

- ☐ «Երեխաների տարիքային զարգացման առանձնահատկություններ» և «Ծնողավարման հմտություններ» խորագիրը կրող 1-ին հանդիպման ընթացքում քննարկվել է 3 տարեկանի և 6-ից 7 տարեկանի ճգնաժամի մասին: Հանդիպման սկզբում տեղի է ունեցել խաղ վարժանք ուղղված մասնակիցների ծանոթացմանը, այնուհետև տեղի է ունեցել դասընթացի ակնկալիքների, սպասելիքների քննարկում և ներկայացում, նախաթեստերի լրացում: Իրականացվել է <<Ծնողական շարադրանք>> մեթոդիկան, որի ընթացքում ծնողները 4-ից 5 նախադասությամբ ներկայացրել են իրենց երեխաներին: Տեղի է ունեցել դեպքի քննարկում 3 տարեկան երեխայի կամակոր պահվածքի վերաբերյալ, այնուհետև անրադարձ է կատարվել տեսական մասին, ներկայացնելով 3 տարեկանի ճգնաժամի

ընդհանուր բնութագիրը, ծնողներին տրամադրվել են գործնական խորհուրդներ տեղի է ունեցել դեպքերի քննարկումներ, դերային խաղ, նկարի վերլուծություն: Հանդիպման երկրորդ հատվածում ներկայացվել է 6-ից 7 տարեկանի ճգնաժամի ընդհանուր բնութագիրը, առաջնային գործունեությունները, նորագոյացությունները, տրամադրվել են գործնական խորհուրդներ, կարևորվել է հատկապես ծնող-մասնագետ համագործակցության դերը: Տեղի է ունեցել 6-ից 7 տարեկանին բնորոշ իրավիճակների քննարկումներ, վերլուծություններ: Ընդհանուր հանդիպումը ունեցել է ինտերակտիվ բնույթ՝ ընթացքում ծնողները ներկայացրել և կիսվել են իրենց փորձով միմյանց տալով նաև խորհուրդներ: Հանդիպման ավարտին իրականացվել է վարժանք՝ <<Հետ հայցք դեպքի մանկություն>>:

- <<Դեռահասության առանձնահատկությունները. Դաստիարակության ոճեր>>: Դասընթացի սկզբում տեղի է ունեցել դերային խաղ, որի ընթացքում ներկայացվել է դեռահասությանը բնորոշ իրավիճակ: Դերային խաղի ավարտից հետո մասնակիցցները վերլուծել են իրավիճակը տարբեր տեսանկյուններից՝ դեռահաս, ծնող, մասնագետ, հանդիսատես: Այնուհետև ներկայացվել է դեռահասության գլխավոր նորագոյացությունները, առանձնահատկությունները: Առանձնահատուկ շեշտադրվել են սեռական հետաքրքրությունները դեռահասության շրջանում, դրանից առաջացող խնդիրները: Քննարկվել են դեռահասությանը բնորոշ հուզական վիճակները, տարիքային հիմնահարցերը, որոնք առաջնային են դառնում տվյալ տարիքային շրջանում, այնուհետև քննարկվել են թե ինչպես է պետք արձագանքել դեռահասների վարքին, ծնողները կիսվել են իրենց փորձով և այդ շրջանում առաջացած խնդիրներով: Հանդիպման երկրորդ հատվածը ուղղված է եղել ծնողի կողմից կիրառվող դաստիարակության ոճերին: Ծնողներին ներկայացվել է դաստիարակության 4 ոճերը դրանց առանձնահատկությունները, հետևանքները երեխայի անձի զարգացման վրա: Այնուհետև ծնողները ներկայացրել են թե, իրենք ինչպիսի ոճ են կիրառում իրենց երեխաների նկատմամբ: Քննարկվել են իրավիճակներ, որոնց ընթացքում ծնողները ներկայացրել են 4 ոճերի կիրառման հետևանքները տվյալ իրավիճակներում:
- <<Ծնող երեխա համատեղ ժամանց>> և դասընթացների ամփոփում: Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել ծնող-երեխա համատեղ ժամանցին նվիրված տեսահոլովակների դիտում քննարկում, այնուհետև յուրաքանչյուր ծնող ներկայացրել է թե ինչպես է անցկացնում ժամանցը իր երեխայի հետ: Քննարկվել են թե որքանով իրականացան իրենց սպասելիքները դասընթացի ավարտին, ներկայացրեցել են ներկայիս հուզական վիճակը: Իրականացվել է խաղ վարժանք, մասնակիցներ¦ին բաժանվել են A4 թղթեր, որոնց վրա պատկերված են եղել երկու շրջանակներ, ըստ նշված ոլորտների՝ մասնակիցները պատկերել են հիստոգրամներ, որտեղ արտահայտել են, մեկ օրվա՝ 24 ժամվա ընթացքում տոկոսային մոտավոր հարաբերակցությամբ, յուրաքանչյուրը որքան ժամանակ է հատկացնում նշված ոլորտներից յուրաքանչյուրին: Առաջին շրջանակում պատկերել են իրենց առօրյա, իսկ երկրորդում՝ իդեալական, ցանկալի տարբերակը:Այնուհետև շեշտադրվել է այն, որ ծնողը նախ անձ է , ով ունի բազում հետաքրքրություններ, ցանկություններ, արժեքներ, դիրքորոշումներ, և չնայած այս հանդիպումներին շեշտը դրվել է ծնող երեխա հարաբերություններին, սակայն յուրաքանչյուրը իրքնաիրացված է իր կողմից ծավալված բոլոր ոլորտներում, արդյունավետ ծնողը նա է, ով համեմատաբար կայացած է կյանքի բոլոր ոլորտներում, ով ժամանակ առ ժամանակ լիցքաթափվում է, ով մասնագիտական մեծ աճ է գրանցում, ով հաջողում է ծնող-երեխա փոխհարաբերություններում:

**Համայնքային մշակութային կյանքին ԿԴԻՀ երեխաների ընգրկվածության ապահովում:**
**Համայնքային բարեկարգման աշխատանք:** Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1 համայնքային աշխատանք Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասում գտնվող Սուրբ Հովհաննես մատուռի հարակից տարածքում: Համայնքային բարեկարգման աշխատքններին ներգրավվել են ընդհանուր թվով եղել **73 մասնակից՝ 61 շահառու երեխա, 11 ծնող, 1 համայնքի անդամ:** Աշխատանքները իրականացվել են 4 հետևյալ փուլով.

**<u>1-ին փուլ՝ հաջողակ պատմությունների ներկայացում և քարտեզագրում:</u>** ՓԻ կենտրոնի շահառու երեխաները իրականացրել են Գավառ համայնքի քարտեզագրում և դիդակտիկ պաստառների միջոցով ներկայացրել են կենտրոնի գործունեության ընթացքում կենտրոնի սաների, համայնքի բնակիչների և Գավառի համայնքապետարանի հետ համագործակցությամբ բարեկարգված 7 տարածքները: Այս տարածքներում իրականացված բարեկարգման աշխատանքները ներկայացվել են կենտրոնի մյուս սաներին, ծնողներին և համայնքի բնակիչներին կենտրոնի **7 սաների կողմից, որից 4 աղջիկ, 3 տղա**:

**<u>2-րդ փուլ՝ Աշխատանքի պլանավորում:</u>** ՓԻ կենտրոնի շահառու երեխաների կողմից տեղի է ունեցել 1 համայնքային տարածքի բարեկարգման ծրագիր՝ վեր են հանվել խնդիրները, առաջարկվել են լուծման քայլեր: Բարեկարգման համար դիտարկվել է Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասում գտնվող Սուրբ Հովհաննես մատուռի հարակից տարածքը: Հանդիպմանը մասնակցել են են գտնվել **17 շահառու երեխա՝ 9 աղջիկ, 8 տղա:**

**<u>3-րդ փուլ՝ Գործողությունների իրականացում:</u>** Պրակտիկ աշխատանքները տեղի են ունեցել 3-րդ փուլի ընթացքում, արդյունքում տեղի է ունեցել տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ, կանաչապատ տարածքի մշակում ու հարթեցում, տաղավարների և աղբամանների մշակում ու ներկում: Գավառի համայնքապետարանի կողմից իրականացվել է աղբահանման աշխտանքներ: Աշխատանքներին մասնակցել են **73 հոգի՝ 34 շահառու երեխա /21 աղջիկ, 13 տղա/, 10 ծնող, 1 համայնքի անդամ:**

Աշխատանքները իրականացվել են հետևյալ փուլերով՝

- Տարածքի մաքրում
- Խոտին հնձում
- Աղբի տեսակավորում և կուտակում
- Երկաթի մշակում
- Աղբարկղերի ներկում
- Տաղավարի ներկում

**<u>4-րդ փուլ՝ Ուխտագնացության կազմակերպում:</u>** Համայնքային բարեկարգման տարածքում կազմակերպվել է արշավ և ուխտագնացություն դեպի Սբ. Հովհաննես մատուռ: Կենտրոնի առաջնորդների խմբից կազմված շահառուների կողմից տեղի է ունեցել մատուռի պատմության ներկայացում, որի արդյունքում հասակակից երեխաները ընդհանուր տեղեկություններ են ստացել տարածքի վերաբերյալ, այնուհետև երեխաները հետաքրքիր և հաճելի ժամանակ են ացկացրել իրենց կողմից բարեկարգված տարածքում: Արշավին մասնակցել են **43 երեխա, որից 28 աղջիկ, 15 տղա և, 10 ծնող**:

**Հայկական Կարիտասի Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի հիմնադրման 14-ամյա տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառում:** Միջոցառումը համախմբել էր կենտրոնի 57 /33 աղջիկ, 24 տղա/ սաներին և նրանց 14 ծնողներին, 14 շրջանավարտներին, համայնքից հրավիրված 20 երեխաների ու երիտասարդների:

Տարեդարձին մասանակից սաները և անձնակազմի անդամները խմբերով ներկայացրեցին հետևալ գործողությունները.

**Մասնակիցների գրանցում և դիամավորում:** Մասնակիցների գրանցմանը հաջորդեց խմբերի բաժանումը: Յուրաքանչյուր մասնակցի տրվեց այցեքարտ նշված խումբ այցելության համար:

Միջոցառման հյուրերին դիմավորոցին մուլտհերոսները, որոնց հագուստները մարմնավորում էին կենտրոնի 2 /աղջիկ/ սաներ:
Միջոցառման բոլոր մասնակիցներին և հյուրերին տրվեցին տվյալ խմբին բնորոշող այցեքարտեր, ներկայացվեց միջոցառման բնույթը:
Այս աշխատանքների իրականացումը իրականացվել է կենտրոնի 5/ 3 տղա, 2 աղջիկ/ երեխայի կողմից՝ սոցիալական աշխատողի ուղղորդմամբ:

- **Մեր համայնքը**: Այս խմբում երեխաները իրականացրեցին Գավառ համայնքի քարտեզագրում և դիդակտիկ պաստառների միջոցով ներկայացրեցին կենտրոնի գործունեության ընթացքում կենտրոնի սաների, համայնքի բնակիչների և Գավառի համայնքապետարանի հետ համագործակցությամբ բարեկարգված 7 տարածքները:

7 / 4 աղջիկ, 3 տղա/ երեխա հանդես եկավ 1 տարածքի բարեկարգման աշխատանքների ներկայացմամբ: Միջոցառմանը մասնակից հյուրերին երեխաները մեծ ոգևորությամբ ներկայացրեցին տվյալ տարածքում կատարված աշխատանքները:
Այս խմբում մասանկիցները ձեռք բերեցին քարտեզագրման հմտություններ և կարևորեցին շրջակա միջավայրի մաքրությունը, հագատար վերաբերմունքը՝ համայնքի և հայրենիքի հանդեպ:
Հատկանշական է՝ որ միջոցառման իրականացման տարածքի բարեկարգման և մաքրման աշխատանքները իրականացվել էին ծրագրի շահառուների աջակցությամբ:
Խմբի աշխատանքները համակարգեցին կենտրոնի սոցիալական աշխատողը և համակարգողը:

- **TED ելույթներ**: Այս խմբում կենտրոնի ներկա և շրջանավարտ սաները ներկայացրեցին մոտիվացրող ելույթներ, պատասխանեցին հյուրերի հարցազրույցներին: Գեղարվեստական կատարումներով հանդես եկան կենտրոնի սաները, ովքեր հաճախում են Լունա պարային համույթ: Պարի խումբը հանդես եկավ **10** գեղարվեստական կատարումներով:

Մոտիվացրող ելույթներով հանդես եկավ ծրագրի 5 շահառու երեխա 3 տղա 2 աղջիկ, 5 շրջանավարտ 1տղա, 4 աղջիկ:
Ելույթները բանախոս երեխաները պատրաստել էին իրենց բառերով ու պատկերացումներով, նրանք նաև պատասխանեցին բլից հարցերին, որոնք պատարստել էին միջոցառումը վարող իրենց հասակակից ընկերները:
Խմբի աշխատանքները համակարգեցին կենտրոնի սոցիալական աշխատողը և պարի խմբավարը:

- **Իմ մոլորակը:** Այս խմբում կազմակերպվեց արտթերապիա, որի միջոցով երեխաները պատկերեցին իրենց մոլորակը՝ իրենց աչքերով: Կենտրոնի հոգեբանը երեխաների հետ համատեղ զարդարել էր արտթերապիայի հատվածը երեխաների կողմից պատրաստած <<Իմ Իրավունքը>> թեմատիկ պաստառներով: Խմբի **10 /5 աղջիկ, 5 տղա/** մասնակիցներին տրվել էին Ա3 թղթեր, գրենական պարագաներ՝ իրենց պատկերացումները թղթին պատկերելու համար: Աշխատանքների ավարտին տեղի ունեցավ հոգեբանի կողմից վերլուծություն: Այս խմբում ներառված **3/ 2 աղջիկ, 1 տղա/** երեխաները գիպսե արձանիկների վրա գունավորեցին Փոքրիկ Իշխան պատվածքի հերոսներին, որի անունով կոչվում է կենտրոնը:

Միջոցառումը նպաստեց համայնքային մշակութային կյանքին երեխաների ընգրկվածության ապահովմանը, խթանեց մասնակիցների սոցիալական, հաղորդակցման, ստեղծագործական հմտությունների զարգացմանը: Միջոցառման արդյունքում նաև արժևորվեցին երեխաների խնամքի ծառայությունները, որոնք նպաստում են ընտանիքների հզորացմանը և վերջիններիս գունեղ մանկության կերտմանը:
Միջոցառումը իրականցմանը ներգրավվել են կենտրոնի բոլոր երեխաներըէ ներառյալ հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող երեխաները, որի արդյունքում երեխաները դարձան առավել համախմբված, միասնական և զարգացավ նրանց թիմային աշխատանքի հմտությունները և ստեղծագործական մտածողությունը:

Միջոցառումը լուսաբանվել է Հանրային Հեռուստաընկերության կողմից:

**Եռօրյա ճամբարի մասնակցություն Թորսգյուղում:** Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակում հուլիսի 10-12-ը Թորոսգյուղում իրականացվեց եռօրյա կրթական ճամբար՝ «Ներառականություն, կրթություն, նորարարություն» խորագրով: Ճամբարին մասնակցում էին շուրջ 80 երեխաներ ծրագրի գործընկեր 7 դպրոցներից և Հայկական Կարիտասի 4 Փոքրիկ Իշխան ցերեկային կենտրոններից: Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնից ճամբարին մասնակցել են **4** երեխա, որից **2** տղա, **2** աղջիկ:

**Ճանաչողական, Ուսումնական այց դեպի Երևան:** Ս/թ հուլիսի 21-ին կենտրոնի **22** սաների համար, որից **9** աղջիկ, **13** տղա իրականացվեց ճանաչողական, ուսումնական այց դեպի Երևան: Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի սաները ճանաչողական այցի շրջանակներում այցելեիցին Երևանի կենդանաբանական այգի՝ այգու կողմից իրականացվող սոցիալական պատասխանատվության շրջանակներում: Այստեղ երեխաները ծանոթացան վայրի բնության, դրա առանձին միավորների պահպանություն, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում և Միջազգային Կարմիր գրքում գրանցված վտանգված կենդանատեսակների պահպանման պատմությանը: Այգում երեխաները նաև դիտեցին կենդանիների ցուցադրական կերակրումները, շրջեցին կենդանաբանական այգում առկա բաժիններով: Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում երեխաները դիտեցին <<Չարլին և շոկոլադի գործարանը¦ արկածային հեքիաթ ներկայացումը:

Ճանաչողական այցի մասնակիցները այցելեցին նաև Սուրբ Աստվածածին մատուռ:

Ուսումնական այցի արդյունքում երեխաները հաղորդակից դարձան մշակութային ու հոգևոր կյանքին, զարգացավ նրանց շփման, հաղորդակցման, ճանաչողական ոլորտը: Արշավին ընդհանուր ներկա են գտնվել 46 մասնակից՝ 17 /**5 տղա, 12 աղջիկ**/ Փոքրիկ Իշխան կենտրոնի շահառու երեխաներ, 2/ **1տղա, 1 աղջիկ**/ Փ Ի շրջանավարտ, Տնային խնամքի 14 շահառու և 1 կամավոր, Հայկական Կարիտասի 13 աշխատակից:

**Ճանաչողական, Ուսումնական այց դեպի Ստեփանավան:** Ս/թ հուլիսի 26-ին Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի **22** սաների համար, որից **13** աղջիկ, **9** տղա ճանաչողական այցի շրջանակներում այցելեիցին Ստեփանավանի Սոճուտ դենդրոպարկ, շրջեցին բուսաբանական այգու տարածքում առկա բնական անտառի ծառուղիներով, ծանոթացան զարդանախշերով բույսերին, ծառուղիներին, վայրի ծագում ունեցող բուսատեսակներին:
Ստեփանավանի Լոռէ էքստրիմ պարկում երեխաները մասնակցեցին արշավային ծրագրերի, ներառյալ ՝ մագլցումներ, խաղեր:
Ճանաչողական այցի մասնակիցները այցելեցին նաև Ստեփանավանի Սուրբ Սարգիս եկեղեցի: Այցը հնարավորություն ընձեռնեց համատեղել առողջությունը պահպանելու, վերականգնելու ամենալավ տարբերակը՝ մաքուր օդ, սոճիների փոշոտում, միաժամանակ հիանալ պատմաշակութային կոթողներով, հուշարձաններով, եկեղեցիներով, անվել տարածաշրջանին հատուկ կերակուրներով:

**Փառատոնի մասնակցություն Ալավերդիում:** Ս/թ հուլիսի 30-ին Հայկական Կարիտասի «Արագ արձագանքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ամենախոցելի ընտանիքներին» ծրագրի շրջանակներում Ալավերդի քաղաքում իրականցվել է սոցիալ-հոգեբանական միջոցառում՝ նվիրված Ընկերության Միջազգային Օրվան: Գավառի Փոքրիկ իշխան կենտրոնից միջոցառմանը մասնակցել են կենտրոնից 11/3տղա, 8աղջիկ/ շահառու

երեխա և 6 /մայր/ծնող: Փառատոնին մասնակցել են այն շահառուները, ովքեր տեղահանվել են Արցախից:
Կենտրոնի թիմը, շահառուների հետ համատեղ ներկայացրել են տաղավար՝ ցուցադրելով իրենց կողմից պատրաստված ք. Գավառին բնորոշ ուտեստներ:
Այս միջոցառման նպատակն էր աջակցել ջրհեղեղի հետևանքով տուժած, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և տեղացի ընտանիքների սոցիալական ինտեգրմանը: Միջոցառումը հագեցած էր երգերով, պարերով, սպորտլանդիայով, մուլտհերոսներով և հետաքրքիր խաղերով, ազգային ուտեստների անվճար հյուրասիրությամբ: Միջոցառմանը մասնակցել են նաև Հայկական Կարիտասի շահառու երեխաները իրենց ծնողների հետ Գյումրիից, Վանաձորից, Գավառից և Արտաշատից՝ համախմբվելով և ստեղծելով ամուր ընկերական կապեր:

**Մեկօրյա ճամբար Սևանա լճի ափին:** Ս/թ օգոստոսի 9-ին Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնի սաների համար կազմակերպված Ամառային ճամբարը Սևանա Լճի ափին բաղկացած էր հետևյալ գործողություններից՝

- Ուխտագնացություն դեպի Սևանի թերակղզի, Սևանավանք վանական համալիր
- Ջոկատների բաժանում, թիմային աշխատանք
- Լողափնյա հանգիստ
- Ջրային և ցամաքային խաղեր
- Համատեղ ուտեսների պատրաստում և ճաշակում
- Երեկոյան խարույկ
- Պարային մրցույթներ

Ճամբարին մասնակցել են **15 շահառու երեխա 8 աղջիկ, 7 տղա**:

**Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված հաշմանդամություն ունեցող երեխաներ**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված է եղել **2** հաշմանդամություն ունեցող երեխա/տղա/:

1 ծահառուի մոտ ԲՍՓՀՄԱ թիվ 6 բաժնի կողմից սահմանվել է <<հաշմանդամ երեխա>> կարգավիճակը հինգ տարի ժամկետով՝ Աուտիզմ:
1 շահառուի մոտ սահմանվել է <<հաշմանդամ երեխա>> կարգավիճակը մինչև երեխայի 18 տարեկան դառնալը:
Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված են եղել **21** երեխա, ովքեր ունեն հատուկ կարիքներ, ինչպիսիք են՝

- *Սելեկտիվ մուտիզմ, գերզգայունություն -**1** երեխա/ աղջիկ/*
- *Ինտելեկտուալ հապաղում, մանկական փարիքի էմոցիոնալ, վարքային խանգարում-**1** երեխա /տղա/*
- *Լեզվական խնդիրներ -**6** երեխա /**3** տղա, **2** աղջիկ/*
- *Պարբերական հիվանդություն – **3** երեխա /**1** աղջիկ, **2** տղա/*
- *Քրոնիկ գաստրիտ-**1** երեխա /աղջիկ/*
- *Հեռատեսություն -**1** երեխա /**1** տղա/*
- *Հիպերմետրոպիա, համագործակցվող շլություն-**1** երեխա/աղջիկ/*
- *Անբավարար փարթամություն-**1** երեխա/տղա/*
- *Թեթև մտավոր հետամնացություն-**4** երեխա/տղա*

- *Հոգեխոսքային զարգացման հապաղում, աուտիստիկ սիմպտոմատիկայով-**3 երեխա / 2տղա, 1 աղջիկ/***

**Ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող երեխաների**
Վարքային խնդիրներ ունեցող 2 երեխաները հաշվետու ժամանակահատվածում ներգրավված են եղել կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններում:

**Անձնական օգնականի աջակցությունից օգտվող երեխաներ:**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառու **9** երեխա/ 7տղա, 2 աղջիկ/ օգտվել են անձնական օգնականի ծառայությունից: Վերջիններս ունեցել են հետևյալ խնդիրները՝

- Ինտելեկտուալ հապաղում
- վարքային խանգարում
- Աուտիզմ
- Հոգեխոսքային զարգացման հապաղում

Անձնական օգնականը նպաստել է շահառուների ազատ ապրելու և ներառվելու իրավունքի իրացմանը՝ օգտագործելով սեփական կարողությունները, սոցիալական և հոգեբանական աշխատանքի արդյունքում ձեռքբերված գիտելիքները, կարողությունները, հմտությունները:

**Ծառայությունում ընդգրկված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների անհատական սոցիալական ծրագրեր:**
Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ԱՍԾ-ներ 4 երեխայի համար և ըստ պլանավորման երեխաներին մատուցվում են կենտրոնի ծառայությունները:
Թարմացվել են ԱՍԾ-ներ 87 երեխայի համար:

**Ներկայացված հաշվետվություններ, հիմնավորող փաստաթղթեր և տեղեկատվական համակարգում իրականացված մուտքագրումներ:**
**«Մանուկ» ՏՀ-ի «ԿԴԻՀ երեխա» ենթահամակարգի շահագործում:** Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառի «Փոքրիկ Իշխան» երեխաների ցերեկային կենտրոնի կողմից «Մանուկ» ՏՀ-ի «ԿԴԻՀ երեխա» ենթահամակարգում մուտքագրված դեպքերը թարմացվել են, բայց համակարգում առկա որոշակի տեխնիկական խնդիրների պատճառով գործընթացը լիարժեք չի իրականացվել: Տեխնիկական շտկումից հետո տվյալները կլրամշակվեն կենտրոնի կողմից:

**Այլ միջոցառումներ/գործողություններ**

**Անձնակազմի մասնակցություն դասընթացների/ վերապատրաստումների/ քննարկումների հաշվետու ժամանակահատվածում:**

- Օգոստոսի 29-սեպտեմբերի 2-ը կենտրոնի համակարգողը Հունաստանում մասնակցել է Կարիտաս Եվրոպայի <<Հույսի կառուցում՝ սրտերը կամրջելով. Կարիտասի Երիտասարդ կամավորների արժեքները գործնականում>> ֆորումին:

*Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համակարգողը անձնակազմի հետ պարբերաբար թիմային քննարկում/հանդիպումներ է իրականացրել հետևյալ թեմաներով՝*

- Հաշվետու ժամանակահատվածում գործողությունների քննարկում և
- Սոցիալական, կրթական միջոցառումների իրականացում: Գործողությունների և պարտականությունների բաշխում կենտրոնի աշխատակազմի շրջանում ըստ իրականացվող միջոցառումների

- Տնայցերի ժամագրաֆիկի կազմում և քննարկում
- Ընտանիքի առաջնային գնահատման կարիքների և ընդգրվող դեպքերի քննարկում
- Դեպքի քննարկում
- Սոցիալ-հոգեբանական աշխատանքի համակարգում: Շահառուների սոցիալական և հոգեբանական հիմնահարցերի վերաբերյալ քննարկում
- Չեկույցի պատրաստում
- Խմբակների/Պար, խոհարարություն, անգլերեն/ աշխատանքի համակարգում
- Շահագրգիռ կառույցների հետ աշխատանքի պլանավորում
- Ճանաչողական և ուսումնական այցերի, ճամբարի իրականացման պլանավորում և երեխաների ներգրավում տվյալ միջոցառումներին
- Համայնքային բարեկարգման աշխատանքների պլանավորում և իրականացում
- Հաջորդ եռամսա գործողությունների պլանավորում

__Աշխատանք համագործակից կառույցների հետ:__ Հաշվետու ժամանակահատվածում դեպքերի վարման նպատակով կենտրոնը ակտիվորեն համագործակցել է հետևյալ շահագրգիռ կառույների հետ՝

- Գավառի Համայնքապետրան
- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
- Քյավառ հեռուստաընկերություն
- Հանրային հեռուստաընկերություն
- ՀՀ ՄԻՊ աշխատակազմի գրասենյակ
- Կանանց աջակցման կենտրոն
- Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց
- Գավառ քաղաքի Հովհ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց
- Գավառ քաղաքի N 5 հիմնական դպրոց
- Գավառ քաղաքի Ավ. Իսահակյանի անվան N4 հիմնական դպրոց
- Գավառի Մ.Բունիաթյանի №8 միջն. Դպրոց
- Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց
- Լոռե էքստրիմ պարկ
- Երևանի կենդանաբանական այգի

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների՝ նշելով Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունները հստակ տեսանելի են, շահառու երեխաները սոցիալապես ակտիվ են, ընդգրկված են համայնքային կյանքում, զգալիորեն բարելավված է նրանց կյանքի հմտությունների որակը:
Բոլոր շահառուների հետ կնքվել են սոցիալական բնույթի նվիրաբերության պայմանագրեր և կազմվել են ԱՍԾ-ներ:
Երեխաները և նրանց ընտանիքի անդամները ակտիվորեն ներգրավվելով ծառայություններում ձեռք են բերել վստահություն կառույցի և մասնագիտական թիմի նպատմամբ, ինչը հիմք է հանդիսացել անահատկան դեպքերի վարմանը և հաջողությունների արձանագրմանը:
Շահառու ծնողներին ներկայացվել է Հայկական Կարիտասի անվտանգության քաղաքականությունը և նրանք մշտապես ազատ կարողացել են արտահայտել իրենց կարծիքը և միտքը կենտրոնի կողմից իրականացվող ծառայությունների վերաբերյալ:

Սույն հաշվետվության մեջ նկարագրված բոլոր գործողությունները նպաստել են երեխաների սոցիալական ներառմանը, նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների ու կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը: Կենտրոնի կողմից տրամադրված ծառայությունների արդյունքում երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվել են սոցիալ-վերականգնողական խորհրդատվություն և աջակցություն, որը խթանել է երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխել է նրանց սոցիալական մեկուսացումը:

Սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից իրականացվող խմբային աշխատանքներում ներգրավվածությունը նպաստել է երեխաների փափուկ հմտությունների, հաղորդակցման և բանակցային հմտությունների զարգացմանը, երեխաները կարողանում են հաղորդակցվել կոնֆլիկտային իրավիճակներում գործածելով խոսքային հմտություններ և բացառելով ֆիզիկական ուժը, նրանք ձեռք են բերել առաջնորդական հմտություններ, տիրապետում են մեդիագրագիտության որոշ կանոնների: Արտ թերապիայի շնորհիվ երեխաների ստեղծարար միտքը զարգացել է, թերապիաները նպաստել են վերջիններիս հոգեբանական խնդիրների հաղթահարմանը: Կենտրոնում երեխաները օգտվել են լոգոպեդի ծառայությունից և հաշվետու ժամանակահատվածում ըստ մասնագետի դիտարկման առկա է դրական առաջընթաց:

Պարի խմբակը նպաստել է երեխաների սոցիալականացմանը, առողջ կենսակերպին և պարային հմտությունների յուրացմանը: Խահարարության խումբը նպաստել է երեխաների թիմային հմտությունների զարգացմանը, նրանք մեծ սիրով միասին պատրաստում եմ ուտեստներ և հյուրսիրում են իրենց ընկերներին: Անգլերենի խումբը նպաստել է երեխաների բառապաշարի զարգացմանը:

Կենտրոնում տրամադրվող տաք սնունդը երեխաների համար ևս ունի կենսական նշանակություն, քանի որ դպրոցից անմիջապես հետ նրանք կենտրոն են հաճախում ու սննդային ընդմիջումից հետո երեխաները կարողանում են էներգիայով լեցուն մասնակցել հետագա գործողություններին: Շատ երեխաների համար սնունդը մեծ նշանակություն ունի քանի որ տանը այս կարիքը շատ խորն է՝ հիմնված սոցիալական դժվարին պայմաններից: Արցախից տեղահանված ընտանիքի երեխաները ադապտացվել են միջավայրին, կենտրոնում իրենց ապահով են զգում:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի մասնագիտական թիմը մասնակցել է դեպքի քննարկումների և համագործակից կառույցների կողմից արժանացել է բարձր գնահատանքի:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

- Ս/թ հոկտեմբերի 2-ին Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում տեղի <<**Ոչ Բռնությանը**>> խորագրով ամփոփիչ թեմատիկ հանդիպում ծրագրի համագործակից կառույցների շահառու ծնողների և կենտրոնի բազմամասնագիտական թիմի մասնակցությամբ:
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid031Vq6FzQ715VLQrxHRdjgCXsJLWTQBqAtGJ45ayzMeSQ3E3JZiaWgx6WEEuPMRXFYl

- **«Ոչ բռնությանը»** քարոզարշավի շրջանակներում իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցառումներ ծրագրի շահառու երեխաների և ծնողների շրջանում
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0ihtjGQjYCQNfpknDEzMQNqAwvEBeMokd6hDHopENeEAmEGkqmfRrBw4kwWZ6wKKil

- Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից իրականացվող **Ոչ բռնությանը միջազգային օրվան նվիրված** իրազեկող և կանխարգելիչ արշավի շրջանակներում նկարահանված տեսանյութ՝ կենտրոնի սաների մասնակցությամբ՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/1072034091158646

- Համայնքային բարեկարգման աշխատանքներ կենտրոնի շահառուների ակտիվ ներգրավվածությամբ՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02xtEo6TK7KA3oA7AomCyzKGMWHGeqxoHjdqDYXxYU5PNEUccvVZHJhL7uTZ9daJ7kl

- Բաց-դռների արշավ: Պարի խմբակի միջոցառում https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02STBemheVAbbjYCNdBXJg9DdsDUk8p2b59bmSqCghSG5javZLxiCLxhwid9aFwXAWl&id=100067178295375

- Ծնողավարման հմտությունների զարգացմանը ուղղված դասընթացներ՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0UnGadgikMqsm5YYHwpX9wGQTnnb8HXN5FEbAWyeoFrTM68iTVEPjN9FvNJxcVhcxl

- Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան >> սոցիալական կենտրոնի և Գավառի Տնային խնամք Միայնակ տարեցներին ծրագրի շահառուներին համախմբել էր Սերունդների Երկխոսություն խորագիրը կրող միջոցառում:
  https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0EDdDXxmfKb2rUHjeiMbWZLcEjGJd7gMDhUCJxBAAdzRWfJKeJgwDj8KfhEL1xkF5l
  https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/410327361536609

- Մ/թ Օգոստոսի 9-ին ճամբար Սևանա լճի ափին https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02zt674VTrVe5TiA5eprG45DT6UHajwf84VCBqCkX64Ce5RzPWtwZkZnHV8SGPhMWLl

- Մ/թ հուլիսի 30-ին Ալավերդի քաղաքում մասնակցություն սոցիալ-հոգեբանական փառատոնին՝ նվիրված Ընկերության միջազգային օրվան: https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0k172eUDJWuua7hkqjaPMT2k4j1YwkwtSWM1kh5CZyw49deNBQ7HTjKroSvX37aVrl&id=61554412805793

  https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/528560599526733

- Մ/թ հուլիսի 26-ին Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի սաների համար կազմակերպված ճանաչողական այցի դեպի Ստեփանավանի Սոճուտ դենդրոպարկ, Ստեփանավանի Լոռէ էքստրիմ պարկում և Սուրբ Սարգիս եկեղեցի: https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0beeUnVeeutmgJs429N91fgZeJRLVwi6pgTjjUbN2jnn4fnR56ZxeGGkRLCLbeFLCl

- Հուլիսի 21-ին Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի սաների համար կազմակերպված ճանաչողական այցը դեպի Երևանի կենդանաբանական այգի, Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն և Սուրբ Աստվածածին մատուռ: https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid027X9p7jeXrFy7PbWMj3gtBnZmrR8UGWufgo176hR9YKsnndorsdxsCT3BhoqABy5bl

- Հուլիսի 10-12-ը Թորոսգյուղում իրականացված եռօրյա կրթական ճամբար՝ «Ներառականություն, կրթություն, նորարարություն» խորագրով՝ **https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/512233624708512**
- Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի հիմնադրման 14-ամյա տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառում՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0ZNAmMNCd3cFRrYMdfZ9kaiWaE1CxZUzsUBwUnhtLf4ca1UEeUJhxyw4AjcneTMwol
- Գավառի Փոքրիկ Իշխան կենտրոնի հիմնադրման 14-ամյա տարեդարձին նվիրված միջոցառման լուսաբանում Յ1-ի կողմից և Հայկական Կարիտասի ֆեյսբուքյան էջում https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0ZNAmMNCd3cFRrYMdfZ9kaiWaE1CxZUzsUBwUnhtLf4ca1UEeUJhxyw4AjcneTMwol
  https://www.facebook.com/watch/?mibextid=Le6z7H&v=1261342565226285&rdid=iG8DS2mOoNL5rXfw

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում խոչընդոտներ չեն գրանցվել: |

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

| |
|---|
| Հաջորդ եռամսյակում կշարունակվեն մատուցվել ծրագրով նախատեսված ծառայությունները:<br>Նախատեսվում է իրականացնել առաջնային հետազոտություն և նոր շահառուների ընդգրկում, դպրոցյացեր:<br>Կազմակերպության կողմից՝ ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտված երեխաների և նրանց ընտանիքների բավարարվածության չափում մատուցված ծառայություններից՝ ըստ ծրագրի հավելված 7-ի:<br>Ծրագրի շրջանակներում տրամադրված ծառայությունների արդյունքում ԿԴԻՀ երեխաների և նրանց վիճակի մոդման կան դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարմանը ուղղված չուցանիշի չափում՝ ըստ ծրագրի հավելված 7-ի:<br>Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանը ուղղված արշավի իրականացում:<br>Ամանորյա և Սուրբ ծննդյան միջոցառման իրականացում: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| ➢ Օգոստոս ամսին, սոցիալական աջակցություն է տրամադրվել **81** երեխայի /37 տղա, 44 աղջիկ/: Յուրաքանչյուր երեխայի տրամադրվել է երեխայի տրամադրվել են **1 հիգենիկ պարագաների փաթեթ** և **1 գրենական պարագաների փաթեթ**:<br>➢ Հայկական Կարիտասի CoNaKa ծրագրի աջակցությամբ շրջանակում Փի-ի կենտրոնի **2** տեղահանված ընտանիքի շահառու մայրերի համար իրականացվել է 3-ամսյա դասընթաց ուղղված Հաշվապահության ոլորտի զարգացմանը: Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր շահառուի տրամադրվել է համակարգիչներ 150.000 դրամ արժողությամբ: |